

հաւատում էին աշուղները, իր ուսուցչի նման, գնում է Ս. Կարապետ ուխտի, ուր ուխտ կատարելուց յետոյ վերադառնում է հայրենի գիւղը եւ ամուսնանում. բայց նրա կինը շուտով մեռնում է եւ նա ամուսնանում է երկրորդ անգամ: Ունենում է չորս որդի. որոնցից երկուսը մինչեւ օրս էլ դեռ ապրում են:

Ալահվերդին իրրեւ աշուղ գտնուում է այնտեղ, ուր ինչոյք կամ հարսանիք է լինում, ինչպէս ինքն է գրում.

«Ամէն մաջլիսում տեսել ամ, Մեծ պատիւն շոր ա էլի:»

Բայց նա շատ վաղ ձեռք է առնում պանդխտութեան ցուպը եւ հեռանում հայրենի գիւղից: Երկար տարիներ նա օտար քաղաքներում՝ Կովկաս, Բասրա, Բաղդատ, Բուշեռ, Քեամարա, Քեաղաղ, Փէրիա եւ այլ տեղեր աստանդական կեանք է վարում եւ շատ աշխարհներ տեսնում: Այդ երեւում է իր մի երգից.

«Ալահվերդի բուլուր աշխարքն տեսար, Ամէնան մաջլիսում Թարիֆըն ասար:»

Իր կեանքի համարեա քառորդ մասը մաշում է նա օտարութեան մէջ, ինչպէս ինքն է յիշատակում.

«Կանգս մաշացրի օտար աշխարհի.» կամ՝

«Վարդան օղի հաբաս տեղըն, Ինչ ես ահ ու զար անում. Ընկնում աս զարիպ երկրում, Քեղի դարբէգար անում:»

Թէ պանդխտութեան մէջ ինչպիսի կեանք է անցկացնում Ալահվերդին — այդ մասին շատ բան չգիտենք: Միայն նրա մի քանի երգից երեւում է, որ նա էս աշխարհում եւ նա մա-

նաւանդ օտարութեան մէջ շատ դառն օրեր է տեսնում, շատ նեղութիւններ քաշում եւ «ամէն կողմանից» կարօտ մնում: Ահա նրա խօսքերը.

«Այս աշխարհի մէջն ես տարայբաղտ ի, Որ ամէն կողմանից կարօտ մնացի... Պանդուխտ երկրներում սարօտ մնացի:»

Վերջում նա մտաբերելով իր կնոջ եւ որդիներին վերադառնում է հայրենի գիւղը, ուր ականատես է լինում երկու ծանր աղէտների. դրանցից մէկն է 1866 թուի երկրաշարժը, իսկ միւսը 1880 թուի թանգութիւնը: Նա երգի նիւթ է դարձնում այդ դէպքերը. դրանից երեւում է, որ նա անտարբեր չէ մնում ժողովրդի ցաւերի ու նեղութիւնների հանդէպ: Նրան յուզում է ժողովրդի դառն վիճակը:

Այդ անցքերից յետոյ նա էլ երկար չէ ապրում, մեռնում է 90 ական թուականներին: Մարմինն ամփոփուած է Չահարմահալի վերին-Քոնարք գիւղի Հայոց գերեզմանատանը, ուր վրան դրուած է անշուք եւ պարզ մի քար, որ ինչ մի արձանագրութիւն չունի:



Ա Շ Ո Ւ Ղ, Ա Լ Լ Ա Տ Վ Ե Ր Ր Պ

Գիւղացիներն Ալահվերդուն նկարագրում են իրրեւ բարձրահասակ եւ նիհար մի անձ, որ բնաւորութեամբ եղել է կատակարան եւ զուարճախօս, ինչպէս այդ ցոյց են տալիս նաեւ նրա մի քանի երգերը: Այժմ տանք նրա «գավթարի» նկարագրութիւնը:

Ալահվերդու «ղավթարը»: Ալահվերդին իր երգերը սեփական ձեռքով գրել եւ ամփոփել է մի «գավթարի», մէջ: Դա կաշեկաղմ եւ անպաճոյճ մի տետրակ է: Մեծութիւն է 22 x 18 սանտիմետր: Ունի 36 քառածալ գրուած թուղթ: Միջից եւ վերջից պակասում են մի քանի թերթեր: Եղած թերթերը կեղ-

տոտել են եւ եղբերը գեղնել: Երգերը-հայ-
երէն եւ թուրքերէն-գրուած են խառնիխառն
եւ անձաշակ ձևագրով: Ուղղագրական սխալ-
ները բազմաթիւ են, օր. մարթ, ախչիկ, աչկ,
է-ով յոգնակի, Կ-ով բացառական, յ-ով
հրամայական եւ այլն:

Երգիչը "գավթարում" երգերի տակ չի
նշանակում ամիսն եւ տարին, միայն իւրաքան-
չիւրի վերջում յիշատակում է իր անունը, ԱԼ-
լահվերդի, երբեմն էլ՝ Վարդան օղլի, որ նշա-
նակում է Վարդանի որդի: Յիշեալ "գավթարը"
ձեռք բերինք 1920 թուին, Չահարմահալի
Վերին-Քօնարք գիւղից եւ այժմ գտնուում է
մեզ մտ:

Տարբերակ վարդանի բազմ

- 1-ին վերջնային տարբերակը իր առաջին շարքերից
ի սրբաւանակից վարդանի: ստացուած վարդան-եհրո-
ւոյ-ընդուն: ցուանքն ի վերջում թիւնքն զարկեց: և
2-րդ անգամ բարձրեց թիւնքն և ստացաւ իւրաքան-
չիւր սիրտից շարքերէն: վարդան-եհրո-ւոյ-ընդուն
ստացաւ իւր անունը: ցուանքն ի վերջում թիւնքն
3-րդ վարդան-եհրո-ւոյ-ընդուն: իւր անունը ստացաւ իւր
կրան գոտուտ-ցուանքն: ինչ վերջում ստացաւ իւր
ստան իւր անունը: իւր անունը ստացաւ իւր
4-րդ վարդան-եհրո-ւոյ-ընդուն: իւր անունը ստացաւ իւր
թիւնքն ի վերջում թիւնքն: իւր անունը ստացաւ իւր
գիւն-ընդուն: իւր անունը ստացաւ իւր
5-րդ վարդան-եհրո-ւոյ-ընդուն: իւր անունը ստացաւ իւր
մեզ լիստ-ընդուն: իւր անունը ստացաւ իւր
ստան գուճ լիստ: իւր անունը ստացաւ իւր
Իւր անունը ստացաւ իւր
Իւր անունը ստացաւ իւր
Իւր անունը ստացաւ իւր
Իւր անունը ստացաւ իւր

Մասնակի դասնագիրք:

Երգերը: Ալահվերդին առաջ թուրքե-
րէն է գրել եւ երգերը, բայց յետոյ սկսել է
նաեւ հայերէն գրել: Այդ երգերից, որոնք
մինչեւ այսօր դեռ անտիպ են՝ 38ը հայերէն է
եւ 21ը՝ թուրքերէն: Երա 38 հայերէն երգերը,
որոնք զանազան նիւթերի շուրջ են անդրա-
դառնում, բայց են անում մեր առաջ երգչի
ներքին հոգեկան աշխարհը եւ ծանօթացնում
մեզ նրա հայեացքների, մտորումների, տեն-
չանքների, սիրոյ եւ ապրած զանազան վայրկեան-
ների հետ: Այդ ոտանաւորները թէ լեզուի, թէ
ոճի եւ թէ բանաստեղծութեան արուեստի կող-
մից անպաճօյճ են, բայց հետաքրքիր: Անցնենք
այժմ այդ երգերի վերլուծման:

1. Երգիծական:

Երգիծական գրականութիւնը շատ աղ-
քատ է հայ աշուղական գրականութեան մէջ.
միջնադարեան գրականութիւնը տուել է մեզ
երեք նշանաւոր երգիծաբան՝ Ստեփաննոս Թո-
խարցի, Յովնաթան Նաղաշ եւ Աղբար-Ադամ.
Նորագոյն շրջանում յայտնի է ժողովրդական
երգիչ աշուղ Զիւլանի, իսկ պարսկահայերի մէջ
միակ երգիծաբանն է, ինչպէս տեսանք, Ամիր
օղլի, որից յետոյ աչքի են ընկնում նաեւ Յար-
թուս օղլի եւ Ալահվերդի, Վերջինիցս մեզ հա-
սել են 8—10 կտորներ. դրանցից մէկի մէջ նա
երգի նիւթ է շինում իր հորթին եւ կատակելով
ասում.

"Էյ պարօններ, մի հօրթ ունի աջայիպ,
Ափսոս շատ բրթութ էր, իսկի մազ չունէր,
Ջանըն շատ նաղուք էր, ցվերված էր քիպ,
Ինքն շատ երկար էր, իսկի գաղ չունէր:"

Հորթից յետոյ՝ Ալահվերդին սրամիտ
ծաղրի եւ հեգնութեան է նւթարկում ժամա-
նակակից Զուղասայ մի քանի անձնաւորութիւն-
ներին, մերկացնելով նրանց բարոյական թերու-
թիւնները: Այսպէս օր. մտրակում է նա իր
ժամանակի "գալաք Գինսին", որն երգչին շատ
է վրդովեցրել.

"... Լաշտ տկուր, փորժտ սօված,
Միշտ քուչէքն գաղ ես անում,
Գաղէ գաղ քուչէ քուչէքն չափում,
Ինչ որ ձեռ աս քցում, արում,
Ամէն մարդու կնկայ խափում,
Ետոյ մին քուչ տաղ աս անում:"

Մի այլ տեղ ծաղրում է իր ժամանակա-
կից Զարթարին, ցոց տալով նրա պակասու-
թիւնները.

"Ինքն իրան թրթրում է,
Շատ խօտէ, փրփրում է.
Ում հասնում է քրքրում է,
Բերանի քանն Զարթարին:"

Իսկ մի ուրիշ տեղ երգիչը մտրակում եւ
հարուածում է Յարթուն, Մինաս, Մարտիրո-
սին, երեւան հանում, հոչակում նրանց վատ
կողմերը, պակասութիւնները. դրանք, երգչի ա-
սելով, նիւթապաշտ, որկրամոլ եւ փողասէր
մարդիկ են, որոնք ոչ խիղճ ունեն, ոչ էլ գուժ.
Նրանք անխնայ հարստահարում են խեղճ աղ-
քատներին եւ նրանց փողերով հաստացնում
իրենց վզերը.

“Ուտում ան ակաթի փուղն...
Տեսէք վղներն ինչ հաստ են...”

Ալաշվերդու երգիծական մի այլ երգից
երեւում է, որ նա հին հայեացքների տէր մարդ
է եղել. ամէն մի նոր երեւոյթ նրան շատ տար-
օրինակ է գալիս եւ համարեա նա չի հաշտուում
նոր կարգերի հետ: Այսպէս՝ ժամանակի հրա-
մայողական պահանջի համաձայն՝ Նոր-Ջու-
ղայում, 80 ական թուականներին, իգական սեռի
կրթութեան համար բացուում են դպրոցներ:
Երգիչը ոչ միայն խորթ աչքով է նայում այդ
հանգամանքի վրայ, այլ եւ աւելացնում է.

“Որ աղջիկներն կարթացին,
Քանդեցին ամէն սարքերն...”

Իսկ շատերը՝

“Հպարտ, հպարտ քուչէն դնում,
Ոչ ում մարդայտեղ չեն դնում.
Չեռ ու ոտ, մազեր ին խինում...
Չիթի են գրում՝ պէտք ա դաս,
Որ ինձ դրիստ պատասխան դաս:”

2. Ժամանակագրական-վարքագրական:

Ալաշվերդու երգերի մէջ ուշագրաւ են
ժամանակագրական-վարքագրական ոտանաւոր-
ները. դրանցից մի քանիսի մէջ երգիչը տալիս է
1860—1890 ական թուականների Նոր-Ջու-
ղայի թշուառութեան պատկերը, որի մէջ ինքն
ապրել է: Երգիչն այդ տարիները համարում է
դառն տարիներ, որովհետեւ Պարսկաստանում
տիրում է սով եւ թանգութիւն, որոնց հե-
տեւանքով կապուում է առեւտուրը եւ կորչում
մարդկանց խղճմտանքը, իսկ ազգական-բարե-
կամ միմեանց տուն չգնալով՝ սառում են իրարից.

“Բարեկամ իրուր տուն չէ գնալ գալով,
Հուէցան իրուրնից, ահ ու զար ելաւ:”

Երգչին զբաղեցրել է նաեւ ժողովրդի բա-
րոյական վիճակը: Ահա ինչպէս է նա նկարա-
գրում իր ժամանակի ժողովրդի վարքն ու բարքը.

“Մտած էլ ամ ժամանակս
Անամուտի օր ա ելի.
Բաղմէլ ա մեղկ ու կրակն,
Չեմ հասկանում դօր ա ելի:”

Էլ ոչ օվ խաթեր չէ պահում,
Որդին հօր երեսին վայում.
Օվ ա առիմանդի նայում,
Մեծ պատիճն ջուր ա ելի:”

Հետաքրքրական է մանաւանդ “սամա-
վարի” երգը: Ռուսաստանի ազդեցութեամբ
1890 թուին, Նոր-Ջուղայում մուտք է դր-
ծում ինքնատուր: Այնուհետեւ Ջուղայեցիները
սկսում են “սամավարով” եւ “նարաթով”
թէյ խմել. երգիչը զարմանում է այդ երեւոյթի
վրայ եւ մանաւանդ իրեն շատ տարօրինակ է
գալիս այն հանգամանքը, որ հարուստները “լա-
կաթով” եւ “առատ շաքարով” թէյը իրուր են
բցում, եւ սամավարի ջուր թէյն են խմում:
Սակայն միայն հարուստները չեն, որ սամավա-
րով թէյ են խմում, աղքատներն էլ վարակուել
են, նրանք էլ “ալաթով” սամավարի թէյ
խմում եւ այն էլ առանց շաքարի.

“Առանցի շաքար ան խմում,
Էլի եփում ան, ճար չէկայ:”

3. Կրօնա-բարոյա-խրատական:

Ալաշվերդին թողել է ընդամենը երկու
կրօնական երգ, որոնք բաւական յաջող են.
Ղրանցից մէկի մէջ նա Պարսկահայ միւս աշուղ-
ների Ղուլ էքազի, Ղուլ Արզունու, Յարթուն
օղլու նման իրեն շատ մեղաւոր է համարում,
ուստի աղերսագին դիմում է Քրիստոսին ու իր
մեղքերի համար թողութիւն է խնդրում: Իսկ
միւսը գովասանութիւն է Յովհաննէս Մկրտչի
մասին: Հետաքրքրական են նաեւ Ալաշվերդու
բարոյական-խրատականները, որոնք բովանդա-
կում են մի շարք խրատներ եւ պատուէրներ.
Երգիչը խրատում է ազամորդուն, որ միշտ խո-
նարհ կենայ, անուշ եւ սիրուն “բալթի”,
քաղցր խօսի, չար չմտածի եւ խաւար չմնայ, որ-
պէս զի “խօրխօրատ” չընկնի: Նոյնպէս խրա-
տում է ուրիշների հետ եղբայրութիւն պահել,
“ջան” ասել, “ջան զուրբան” անել եւ “խաթր”
չահել:

4. Միրային:

Ալաշվերդու երգերի մէջ առաջնակարգ
տեղ բռնում են սիրոյ երգերը, որոնց թիւը
սակայն, շատ չէ: Այդ նիւթին նուիրուած են
նրա վեց քերթուածները, որոնք գրաւում են
զգացմունքների անկեղծութեամբ եւ գեղեցիկ
նմուշներ են Նոր-Ջուղայեցոց բարբառի. նրանց
մէջ աշուղը զգայուն եւ անկեղծ շեշտերով եր-
գում է “ազիղ” եարի հանդէպ տաժած սէրը,
իր սիրոյ բռնկումը, ապրումները. բայց նա Բաղէր
օղլու, Ղուլ Յովհաննէսի եւ Յարթուն օղլու

նման չի նկարագրում իր սիրածի պատկերը,
այլ բաւականանում է անուանելով նրան «հրեշ-
տակի կերպ», «աղիղ», «լլբուլ», եւ այլն:

Ալլահվէրգու սէրը բոճանտիկ սէր է, մաքուր
եւ անկեղծ, բայց խորտակուած սէր: Այդ սէրը
սկզբում երգչի համար անհուն երջանկութեան
եւ զմայլանքի առարկայ է, բայց վերջում դառ-
նում է վշտի եւ տանջանքների աղբիւր: Այդ
ենց տալիս մեզ նրա սիրային երգերը: Նրանց
շարքում յաջողուածներէ կարելի է համարել
«հեռեկան» ճանաչում աս, ոտանաւորը. դա
ժողովրդական մօտիւով գողտրիկ մի սիրերգ է,
որի մէջ եւ գիշը թափում է իր սիրային զեղում-
ները: Այնտեղ նա քաղցր զըրոյն է անում իր
«աղիղ» ի հետ եւ արտայայտում իր առա-
ջին եւ մաքուր սէրը: Նրա ետքը «սոկէջըաց
ըն» եւ մաքուր սէրը: Նրա ետքը «լլբուլ», է, որ
մազերով, քաղցրախօս մի «լլբուլ», է, որ
«աչկ ու ուգով խապ ա տալիս» երգչին,
եւ որի անունն աշուղները յիշում են իրենց
տաղերի մէջ.

«Ես Բլբուլ ամ բաղի մէջ,
Աշուղների խաղի մէջ.
Իմ անունն յիշվում աս,
Ամէն դրբի տաղի մէջ:»

Այդ Բլբուլ-ետքը գերում է երգչի սիրան
ու հոգին, յափշտակում խելքն ու միտքը եւ
կաշկանդում է նրա ամբողջ էութիւնը, եւ նա
սիրատուր գիմում է սիրականին ու պատկերաց-
նում իր սիրակէզ սիրտը.

«Ամէն բան մօռացէլ ամ,
Շատ լալով քօռացէլ ամ.
Քո աղիկ խատրի համար,
Ասկերէս հեռացէլ ամ:»

Անկեղծ սէրն է երգուած այգտեղ, սիրոյ
սաստիկութիւնն է արտայայտուած, այնքան պարզ,
բայց գեղեցիկ ձեւով:

Սակայն սիրող երգիչը այդքանով չէ
բաւականանում. նա սքանչացած իր «աղիղ» ի
բաւականանում. նա սքանչացած իր «աղիղ» ի
չքնաղ պատկերից՝ այլ եւ այլ ձեւերով իր
եարի դրուատիքն է անում եւ իր սէրը երգում.
Ինչպէս օր.

«Երեկեի մեծ նշան աս,
Ինձ համար սուլթան ու խան աս.
Ինձ վաղդ աչկիս երեկման աս,
Միսս սսկուրէս թափ աս տալիս:»

Բայց այդ դրուատիքն էլ երգչին չի գո-
հացնում եւ նա նոյն տաղի ետքի պատկերը
անուանում է հրեշտակակերպ:

«Կերպ ունես հրեշտակի նման,
Աջախ շօշափ աս տալիս:»

Նրա ետքը, սակայն, ոչ միայն գեղեցիկ
է արտաքինով, այլ եւ աննման է հոգով եւ
սրտով: Նրա միտքը մաքուր է, սիրտը՝ բարի,
հոգին՝ ջերմեռանդ: Եւ նա երկու սեղմ եւ
պարզ տողերի մէջ դժուար է իր «աղիղ» ի
հոգեկան աղնուութիւնը.

«Դու ահա՛ արար աս նաշարի,
Միտկո մաքուր, սիրալո բարի:»

Նրա «լլբուլն» էլ իրեն պէս սիրահա-
րուած է եւ սիրում է երգչին ջերմ սիրով, բայց
նա չի համարձակուում իր սէրն ազատ արտա-
յայտել, որովհետեւ իրրեւ աղջիկ «ճար» չունի.

«Ես ինչ անեմ, ճար չունեմ,
Քեզնէ ավել ետք չունեմ.
Աստուծուն ուրն յայտնի է.
Սաթամ քեզ, զարար չունեմ:»

Սիրոյ սկզբնական շրջանն է սա, որ սակայն
չուտով տեղի է տալիս ողբերգական կացու-
թեան: Երգիչը, հակառակ իր անհուն տեն-
չանքին, չի կարողանում սիրել իր Բլբուլին, չի
կարողանում վայելել նրա «հրեշտակի կերպը»: Ետքը
թողնում է երգչին միայնակ ու անմոխթար
Բարեթեան մէջ եւ արտասուք քամում նրա աչ-
քերից: Երգիչը ետքի կարօտից ընկնում է դառն
տանջանքների մէջ եւ այլ եւս չկարողանալով
տոկալ՝ հնչեցնում է իր սաղը եւ գանգատուում.

«Մէնակ տեղերին քնում աս,
Ետքեց արտ կարօտ մնում աս.
Զարում ինեւ լացացնում աս.
Դու խնդարով ծապ աս տալիս:»

Բայց ողբերգականը միայն այդ չէ. սիրոյ
սարսափելի դրաման այն է, որ նրա ետքը, թող-
նում է երգչին եւ ամուսնանում ուրիշի հետ:
Թէ ինչու, ինչ պատճառով, այդ մեղ յայտնի չէ:
Այդ իրականութեան առաջ երգչի հոգին դառ-
նանում է, նրա համար մի մտայլ տրամադրու-
թիւն է ստեղծում եւ նա յուսահատութիւնից
անխճում է ետքն իրենից բաժանողին.

«Օ՞ք որ քեզի ինձն է հանից,
Հայ միշտ աչքերըն լաց մնայ,
Խէր չէ տեսնու իրան ջանից,
Լաշն տկար ու բայ մնայ:»

Այստեղ նկատեք, որ Ալլահվէրգու սի-
րային երգերից մի քանիսը իրենց ձեւերով
«զան գիւլումներն» են յիշեցնում եւ մի քանի

տողեր էլ որոշ նմանութիւն ունին: Դա ցոյց է տալիս, որ նա ազդուել է ժողովրդական մտօւններինց եւ հաւատարիմ է մնացել նրանց հարազատ արտայայտութեանը:

5. Ղարիպի երգ:

Ալլահվէրդին գրել է նաեւ մի հատ զարիպի երգ: Դա Ղարիպի կեանքը պատկերացնող բաւական յուզիչ մի կտոր է, որի մէջ աշուղը ցոյց է տալիս Ղարիպի կեանքի դառնութիւնները: Ղարիպն, ասում է երգիչը, երբ օտար երկրի մէջ, «խանում» մենակ է մնում, այն ժամանակ է իմանում իր «դօստ ու դուշմանն», իսկ երբ իր սիրելի «վադանն» է մտաբերում, աչքերը լցում են արցունքով:

«Ղարիպ մարդըն մէնաք որ մնայ խանըն, Նոր կիմանայ իրան դօստ ու դուշմանն. Ինչ վաղտ միտըն ընկնի ու ան վադանըն, Տեսնես արտայայտուգով լալը Ղարիպին:»

Օտարութեան մէջ նա ինչքան էլ հարստութիւն զիգէ, դարձեալ ոչինչ է նրա համար, որովհետեւ նրա միտքը մոլոր է եւ սիրտը տխուր:

Ղարիպութեան թշուառ եւ ծանր վիճակը, անշուշտ, անձամբ քաշել եւ զգացել է Ալլահվէրդին, իր 25 տարուայ աստանդական կեանքի ընթացքում եւ նա «Այս աշխարհի» խորագրով ոտանաւորի մէջ տալիս է իր Ղարիպ կեանքի դառն պատկերը:

«Ես ինձ մխիթարով օր անձկացրի, Դարդերըս կիտեցի, սրտումս դրի. 2ունէի բարեկամ, որ ցաւս դրի, Պանդուխտ երկրներում սարօտ մնացի:»

6. Զանազան երգեր:

Բացի յիշուածներից, Ալլահվէրդին թողել է մի քանի ուրիշ երգեր եւս, որոնց մէջ պատկերացնում է անձնական վիշտն ու տառապանքը: Երգիչն այս աշխարհում իրեն տարաբախտ է զգում, մարդ չունի, որին իր դարտերը պատմէ. ամէնքը նրան օտար են: Բայց այդ դեռ ոչինչ է: Երգչի ջահելութիւնն անցել է եւ սիրտը տալիս է բաղձաթիւ մեղքերից: Իսկ ծերութիւնը յաղթել եւ կարել է քունը. նա այլեւս չունի կարողութիւն, որովհետեւ ցամաքել է արիւնը եւ սիրտն ամայացել:

«Ծերութունըս ախտել է, կտրէլ է քունըս, Զէկայ կարեղութուն, քաշվեց արիւնըս:»

Ալլահվէրդու երգերի մէջ պիտի յիշել նաեւ «Որ ժամանակ ընգայ մօրս արգանդն» խորագրով ոտանաւորը, որ գրուած է Ղուլ Յովհաննէսի «Ադամորդուս» քերթուածի ազդեցութեան ներքոյ:

7. Լեզուս:

Ալլահվէրդին իր ուսուցչի՝ Յարթուն օղու նման իր երգերը գրել է Նոր-Ջուղայի եւ Չահարմահալի խառն բարբառով, որ նոյնպէս համեմատուած է բաղձաթիւ թուրքերէն եւ պարսկերէն բառերով: Բայց չնայած դրան՝ այդ լեզուն բաւական պարզ է եւ սահուն: Նա աշխատում է որքան կարելի է պատկերաւոր լեզուով գրել եւ գործ է ածում բաղձաթիւ ածականներ, մակդիրներ: Այդպէս են յատկապէս նրա սիրային երգերը:

Տաղաչափութեան տեսակէտից էլ Ալլահվէրդու երգերը բաւական յաջող են: Նրա երգերի, յատկապէս սիրերգների մէջ կայ որոշ չափ, երաժշտականութիւն: Այդ երգերը բաժանուած են տների, որոնք մեծամասնութեամբ քառատող են, իսկ փոքր մասով բաղկացած են հինգ, վեց, ութը եւ նոյն իսկ մինչեւ տասն տողերից:

Յանգի տեսակէտից եւս Ալլահվէրդու երգերը բաւական յաջող են:

Մասնաւորելով մեր խօսքը Ալլահվէրդու մասին եղրակացնենք, որ նա Յարթուն օղու աշակերտը լինելով՝ ստացել է նրանից զանազան տեսակ տպաւորութիւններ եւ նրա ազդեցութեան տակ էլ զարգացել է: Այդ երեւում է նրանից, որ նա եւս երգի նիւթ է դարձրել այն մտօւնները, ինչ որ երգել է Յարթուն օղին: Թէեւ առաջնութեան պատիւը տրւում է վերջինիս, թէ աւելի բանաստեղծական շնորհք եւ թէ աւելի արժեքաւոր գրիչ ունենալուն համար: Բացի Յարթուն օղուց՝ նա որոշապէս կրել է նաեւ ժողովրդական «Ջան գիւլումներին» ազդեցութիւնը ու տոգորուել է նրանց շնչով: Նոյնպէս նրա երգերի մէջ պարսկերէն լեզուի եւ բանաստեղծութեան ազդեցութիւնն զգալի է: Այս բոլորով հանդերձ՝ Ալլահվէրդին իր երգերում գրել է որոշ ինքնատպուութիւն: Այդ երգերից երեւում է, որ նա ունեցել է յորինելու շնորհք:

(Շարունակելի)

ԱՐԱՄ ԵՐԵՄՅԱՆ

